# ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ

## ԵՐԳԵՐ, ՊԱՐԵՐԳՆԵՐ ԵՒ ԱՂՕԹՔՆԵՐ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԶԱՅՆԱԳՐԵՑ

ՂԱԶԱՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎՍԷՓԵԱՆ։

Յ. Սուլթանշահեանի [illegible] [illegible] Թիֆլիսում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՈՐՈԽՕԴՈՎԻ։

1887.

3357

# ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ

ԵՐԳԵՐ, ՊԱՐԵՐԳՆԵՐ ԵՒ ԱՂՕԹՔՆԵՐ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՁԱՅՆԱԳՐԵՑ

ՂԱԶԱՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎՍԷՓԵԱՆ:

Վաճառւում է՝

Յ. Սուլթանշահեանի Երաժշտական Գրախանութին մէջ Թիֆլիսում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՈՐՈԽՈԴՈՎԻ:
1887.

784.67
Z-85

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1 Ноября 1886 года.

1348-42
7143-57
2002

Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ

ԲԱՐԵՐԱՐ ՀԻՄՆԱԴՐԻ

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՀԱՆՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆՑ

ԽՈՆԱՐՀ ՆՈՒԷՐ

Աշխատասիրողէ:

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Վստահանումեմ տալ Հայ երեխաների ձեռքը «Քնար մանկական» Երգարանը, որը պէտք է զարգացնէ նրանց գեղասիրական ճաշակը, զարթեցնելով նրանց քնքշիկ սրտերում մայրենի լեզուի քաղցրութիւնը և նրան սովորելու անհրաժեշտ կարևորութիւնը:

«Քնար Մանկական»ի երգերը քաղել եմ հետևեալ գրքոյկներից. «Սրինգ Հովուական», «Մայրենի Լեզու» Ա. տարի, «Մանկական երգեր և ոտանաւորներ», «Ընտանեկան աշխարհ». իսկ մի քանի հատ էլ «Ձայնագրեալ Մանկական Երգարան»-ից: Եղանակներից մի քանիսը ժողովրդական զանազան երգերից եմ փոխադրել, մի քանիսը Գերմանականից, իսկ մի քանիսի եղանակներն ևս նուաստիս ինքնուրոյն շարադրութիւնն է:

Քաղցր պարտք եմ համարում հրապարակաւ յայտնել այստեղ իմ ջերմագին շնորհակալութիւնը մասնագէտ Պ. Մակար Եկմալեանցին, որ առանց վարձատրութեան բարեհաճեցաւ կազմել Երգարանիս ներդաշնակութիւնը և կատարել նորա սրբագրութիւնը:

ՂԱԶԱՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎՍԷՓԵԱՆ:

8 Մայիսի 1886
Թիֆլիս:

# ՆԵՐԴԱՇՆԱԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ներողութիւն ենք խնդրում հմուտ մասնագէտներից և արժանապատիւ Հեղինակից թէ՛ այն թերութիւններին համար, որոնք կարող են գտնուիլ մեր ներդաշնակութեան և երգերի ձևին մէջ, և թէ՛ այն փոփոխութիւններին, որ արել ենք բուն եղանակներին մէջ: Այդ եղանակները մասամբ հաւաքուած լինելով ժողովրդի բերանից և ուրիշ աղբիւրներից՝ շատ անգամ զուրկ էին երաժշտութեան տարրական օրէնքների պահանջած պայմաններից, որով և անհնար էր նոցա համար կազմել կանոնաւոր ներդաշնակութիւն: Ուստի այդ դէպքերում կանոնաւոր ներդաշնակութիւնը կարելի անելու համար (և նոյն իսկ եղանակները կանոնաւորելու համար՝) մենք թոյլ ենք տուել մեզ՝ անել կարևոր փոփոխութիւններն եղանակներին մէջ, և յոյս ունինք թէ այս փոփոխութիւններն չպիտի համարուին կատարուած ի վնաս ամբողջի կանոնաւորութեան և գեղեցկութեան:—Մի քանի եղանակներ էլ, որոնք մասնաւոր փոփոխութիւններով անգամ չէր կարելի երաժշտական կանոնաւոր ձևի վերածել՝ դուրս են ձգուած բոլորովին:

Մ. ԵԿՄԱԼԵԱՆՑ:

25 Հոկտ. 1886
Ս. Պետերբուրգ:

# ԱՔԱՂԱՂ:

1. Moderato.



## ՆԱՊԱՍՏԱԿ։






## ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ։



## ԳԱՌՆՈՒԿ:

**4. Più Allegro.**






## ԹՌՉՆԵԿ ԵՒ ՄԱՆՈՒԿ:

**5. Moderato.**




## ԱՐԵՒ:

**6. Andante.**








**ԱՌԱՒՕՏԵԱՆ ՈՂՋՈՅՆ։**



## ՓՈՔՐԻԿ ՈՐԲԸ:

8. **Andante.**







## ՊԱՐԵՐԳ:

9. **Allegretto.**














## ՆԱՊԱՍՏԱԿ։

### 10. Moderato.





## ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ։

### 11. Adagio molto.







## ՊԱՐԵՐԳ։

### 12. Allegretto.





3357

7143.57






## ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ։

**13. Moderato.**






### ՊԱՌԱՒԻ ՅՈՐԴԸ։

**14. Allegro.**









### ՀՈՎՈՒԻ ԱՆԿՈՂԻՆԸ։

**15. Con moto moderato.**







### ՄԱՅԻՍ։

**16. Allegretto.**



Listesso tempo.




## ՊԱՌԱՒՆ ՈՒ ԱՅԾԸ:

17. Allegro moderato.









## ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ:

18. Moderato.







## ԳԱՌՆՈՒԿՆ ՈՒ ՄԱՅՐԸ:

19. Allegretto.






## ԹՌՉՆԱԿ։

**20. Poco vivo.**









## ՎԻԺԱԿԻ ԵՐԳԵՐ։

**21. Moderato.**












22. **Moderato.** ՄԱՅԻՍ։












ՁԱԳՈՒԿ ԵՒ ԿԱՏՈՒ։

23. **Allegretto.**






## ՆՈՐ ՏԱՐԻ:

**24. Allegretto.**




## ԼՈՒՍԻՆ ԵՒ ԱՐԵՒ:

**25. Moderato.**









## ԿԱՐԴԱԼ ԵՒ ԳՐԵԼ:

**26. Allegretto.**





## ԱՅԾԵՄՆԻԿ ԵՒ ՈՐՍԿԱՆ:

27. Andantino.



Дозв. ценз. Спб. 4 Ноября 1886 г.
Граверъ К, Цигертъ, Каз. 15.
Типо-Лит. Р. Голике. Троицк пер. 18-20.



### 1. ԱՔԱՂԱՂ:

Դու ինձ ասա, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միրուքիդ մատաղ.
Ինչո՞ւ ես շուտ արթնանում,
Բարձըր բարձըր երգ ասում,
Քաղցըր քունըս խանգարում:

### 2. ՆԱՊԱՍՏԱԿ:

Երկու փոքրիկ նապաստակ
Հանգիստ խոտ են կրծոտում,
Եւ գալիս է չար որսորդ,
Փըշտ՝ բոլորն են փախչում.
Բոլորն են փախչում:

### 3. ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ:

Ով Տէր մեր գըթած,
Դու լոյս առաւօտ,
Ծագիր և մեզ մօտ
Քո լոյսդ անաղօտ:

Թող լուսաւորուին
Մեր միտքն ու հոգին,
Որ քո լոյս անուան
Լինինք փառաբան:

### 4. ԳԱՌՆՈՒԿ.

Սիրուն անմեղ իմ գառնուկ,
Բուրդըդ սպիտակ ու փափուկ.
Դաշտ վազելով ու արօտ՝
Մօրըդ քաշում ես կարօտ:

Մի՛ լար, գառնուկ սիրական,
Փոքրիկ տըղի դու նըման.
Կըգայ մայրըդ, հետը շատ
Կըբերէ քեզ անուշ կաթ:

### 5. ԹՌՉՆԻԿ ԵՒ ՄԱՆՈՒԿ.

Թռչնիկն ահա դէպ ինձ գալով՝
Ոտքիս վերայ նըստում է.
Կըտցում բըռնած մի նամակիկ՝
Հօրիցս ողջոյն բերում է:

Սիրուն թռչնիկ, գնա՛ անցիր,
Բարեկիս տար և համբոյր.
Ես չեմ կարող քեզ ընկերել,
Դեռ դասերս չեմ վերջացրել:

### 6. ԱՐԵՒ:

Արև արև, եկ եկ,
Ջի զի քարին վեր եկ.
Սև սև ամպեր, հեռացէք,

Արևին ճամբայ տուէք.
Թողէք դա գայ մեզ մօտ,
Դորա լոյսին ենք կարօտ:
Կարմիր արև, եկ եկ,
Նաշխուն քարին վեր եկ:

### 7. ԱՌԱՒՕՏԵԱՆ ՈՂՋՈՅՆ:

Արև յաղթեց ամպերին,
Շողքը ձըգեց սարերին.
Ջի զի քարը, տես տես,
Պըսպըղում է ոսկու պէս:
Սիրուն արև միշտ եկ եկ,
Ջի զի քարին եկ վեր եկ:

## 8. ՓՈՔՐԻԿ ՈՐԲԸ։

Փայլուն արևը արդէն մայր մըտաւ,
Լուսինն էլ վաղուց գընաց թագ կացաւ.

Փոքրիկ աստղերը ամպով ծածկուեցան,
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան։

Ամէն մարդ գնաց իւր տունը հասաւ,
Ամէն երեխայ մօր գիրկը մըտաւ.

Միայն խեղճ որբը չունի հայր ու մայր,
Չունի բարեկամ, ոչ քոյր, ոչ եղբայր։

Անտէր մնացած Աստուծոյ կամքին՝
Խեղճը քընած է փողոցի միջին։

## 9. ՊԱՐԵՐԳ։

Այսօր մենք շատ ուրախ ենք,
Արի՛ք, ընկերք, մենք կարգով
Շրջանաձև պար բռնենք,
Պարերգ երգեր մենք երգենք։
Հա, հա, հա, այսօր մենք շատ ուրախ ենք։

Կրօնի դասը պատմումենք,
Հայ լեզուն վարժ կարդումենք.
Բերանացի թելադրութիւն,
Առանց սխալի գրումենք։ Հա, հա, հա ևն։

Փոքր թուեր բերանացի,
Դասատան մէջ հաշուումենք
Իսկ մեծերը գրաւոր
Մեր տներում վճռումենք։ Հա, հա, ևն։ հա,

Նկարչութիւն սիրումենք,
Տետրերը մաքուր պահումենք,
Եւ ուսուցչի դասերը,
Մեծ ջանքով նկարումենք։ Հա, հա, հա, ևն։

Երգերը մեծ եռանդով
Խմբովին ուսանումենք,
Եւ մեծ դասամիջոցին
Մենք ներդաշնակ երգումենք։ Հա, հա, հա, ևն։

Հերիք է բաւական է,
Որքան այսօր խաղացինք.
Դէհ դասատուն շուտ վազենք,
Մեր դասերը պատրաստենք։ Հա, հա, հա, ևն։



## 10. ՆԱՊԱՍՏԱԿ.

Մի վազեր այդչափ արագ,
Իմ սիրունիկ Նապաստակ.
Շատ պլստիկ ես տակաւին,
Թաթիկներդ կը յոգնին։

Կաց քեզ համար հաց բերեմ,
Շաքարեղէն ուտեցնեմ.
Մինչ մեծանաս զօրանաս,
Ցատկելով մօտս խաղաս։

Ծանր ծանր կըքայլես,
Սիրտըս վեր վեր կըհանես.
Կարձակեմ քեզ ապա ես՝
Կերթաս ազատ կարածես։

## 11. ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ.

Ով Աստուած իմ, Տէր բարերար,
Դու պահպանիր ինձ այս գիշեր.
Տուր հօրս ու մօրըս կեանք երկար,
Երջանկութիւն և լաւ օրեր։

Քո սուրբ հրեշտակըդ մեր մօտից
Չըհեռանայ ամենևին,
Այլ միշտ պահէ փորձանքներից,
Արթնացընէ զուարթագին։

## 12. ՊԱՐԵՐԳ.

Ջանանք մեր խըմբիկի մէջ
Միշտ շընորհքով լինելու.
Մեր ուրախ խաղի մէջ
Կարգ աշխատենք պահելու։

Սէրը մեր գործի մէջ թագաւորէ,
Եւ օգտակար նա պտուղ բերէ
Եւ օգտակար նա պտուղ բերէ։

## 13. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ.

Արևն իւր ոյժը կորցրած՝
Ամպերի տակ ծածկուեցաւ.
Սաստիկ քամին ողջ ծառերի
Տերևները վայր ածաւ։

Շատ թըռչուններ և թիթեռներ
Անյայտացան դաշտերից.
Ծառը չունի կանաչ տերև,
Նա զըրկվում է իւր զարդից։

Երկնքումը ամպի քուլէքն,
Անձրևներ են պատրաստում.
Անտառը իւր տերևներով
Առուն տխուր քըչքըչում։

Ինչի՞ դաշտերի սողուններ
Եւ վայրենի թըռչուններ
Շտապումեն իրենց համար
Մի ապահով տեղ գըտնել։

## 14. ՊԱՌԱՒԻ ՀՈՐԹԸ.

Ձիւն էր գալիս փաթիլ փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ կաթիլ.
Այս միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փընտռում դաշտի միջին։

Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծք ու ծծեր կաթով լիքը.
«Հորթը ո՞ւր է», նա բառաչեց,
Խեղճ պառաւին լացացրեց։

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Որոնումէին լաց ու կոծով՝
Յանկարծ լըսուեց մի բարակ ձայն.
Կովն իմացաւ, որ հորթն է այն։

Կովը վազեց բառաչելով,
Պառաւն յետնից տընքընքալով.
Կորած հորթը մօրը գըտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ։

Ծըծեց բոլոր կաթն ու տըկզեց,
Տանտիկնոջը բան չըթողեց.
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին։

## 15. ՀՈՎՈՒԻ ԱՆԿՈՂԻՆԸ.

Սարի լանջն է մահճակալ.
—Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ փափուկ է։
Չեչոտ քարը գլխակալ.
—Ուխա՜յ, ուխա՜յ, ինչ կակուղ է։

*

Մի հին կապերտ ուսերին.
—Ուխայ, ուխայ, ինչ նախշուն է։
Այս է հովուի անկողին,
—Ուխայ, ուխայ, ինչ սիրուն է։
Երբ անձրև է կաթկաթում,
Կաթկաթում,
Եւ կապերտը թրխկթրխկում
Թրխկթրխկում՝
Հովիւն անուշ քընի մէջ,
Կապերտում՝
Քաղցր երազ է տեսնում,
Եւ խնդում է ծիծաղում։
—Ուխայ, ուխայ, սիրուն հովիւ,
Քունդ անուշ։

## 16. ՄԱՅԻՍ.

Երբ մայիսին ես անցնում եմ անտառով՝
Գեղեցկագոյն թռչուններ շատ եմ տեսնում. լա լա էն։
Ամէն մէկը ուրախութեամբ երգելով՝
Աշխատում են տաք բուն շինել թփերում. լա լա էն։

Երբ անցնում եմ ես ծաղկապատ դաշտերով՝
Շատ թիթեռներ ու բզէզներ եմ տեսնում. լա լա էն։
Սև ու սպիտակ և հազար մի գոյներով
Ծաղկից ծաղիկ թռչկոտում են ծըլվըլում. լա լա էն։

Ա՜խ շատ սիրուն, շատ գեղեցիկ է դաշտը,
Ուր վերայ ոչխար, տաւար և այծեր լա, լա էն
Ամէն կողմից բառաչում են ու մայում,
Եւ ինձ իրենց քաղցր ձայնով գըրաւում. լա լա էն։

## 17. ՊԱՌԱՒՆ ՈՒ ԱՅԾԸ.

Պառաւն մի այծ ունէր,
Փոքրիկ սիրուն այծ.
Որով նա ապրում էր
Աղքատ մընացած։
Խեղճուկ, մենակ
Աղքատ մընացած։

Մի օր իւր այծիկը
Նա հանդը տարաւ,
Եւ կանաչ խոտումը
Արածեցըրաւ։
Կուշտ, կուշտ, կուշտ, կուշտ
Արածեցըրաւ։

Մարտ ամսի վերջերն էր,
Խիստ քամի փչեց.
Պառաւի աչքերը
Այծը կուրցըրեց։
Ափսոս, ափսոս,
Այծը կուրցըրեց։

Նորանով գայլերը
Կերակըրուեցին,
Եւ խեղճուկ պառաւին
Պոզերը թողին։
Միայն, միայն
Պոզերը թողին։

Պառաւը նըստած էր
Փունջ խոտը ձեռին,
Անմխիթար ձայնով
Կանչում էր այծին.
«Էկ, էկ, էկ, էկ»,
Կանչում էր այծին։



## 18. ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ.

Այ մարդ, այսօր շատ քընեցար ննջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր։
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ։

Ընկերներդ վաղ արտերը գընացին,
Ցորեն գարի գերանդիով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նըստան հանգչիլ կաղնիների հովումը։

Ա՜յ մարդ, վե՛ր կաց, սառը ջըրով լուացուիր,
Գոտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր,
Քանի հով է՝ հունձդ արա արտումըդ,
Հունձըդ հընձէ, մի ծուլանար գործումըդ։

Հունձըդ հընձէ, բարդըդ բարդէ, տուն արի,
Հանգըստացիր. երբ քո հունձըդ կատարի՝
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը.
Ես իրիկուան կըպատրաստեմ սեղանը։

Ա՜յ մարդ, հերիք, ի զուր այսօր քընեցար.
Աչքըդ մէկ բա՛ց, տես թէ ո՛րչափ ուշացար.
Մեր դըրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լըսել է մեր գըղերը ձայնելէն։

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր դըռան.
Մի ծուլանար, ժամանակըդ խընայէ.
Այն պիտի մեզ բոլոր ձըմեռ կերակրէ։

## 19. ԳԱՌՆՈՒԿՆ ՈՒ ՄԱՅՐԸ.

«Ինչո՞ւ կուլաս դու, գառնիկ».
—Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ։
«Քեզ ո՞վ ծեծեց, իմ գառնիկ».
—Մէկ կախարդ պառաւ կընիկ։
«Ինչո՞ւ ծեծեց քեզ, գառնիկ».
—Ծառի տակն էի, մայրիկ։
«Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ».
—Մէկ մեծ փայտով, իմ մայրիկ։
«Ո՞րտեղիդ զարկեց, գառնիկ».
—Ոտիկներիս, իմ մայրիկ։
«Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ».
—Մէ՜, մէ՜, մէ՜, մէ՜, իմ մայրիկ։

## 20. ԹՌՉՆԱԿ.

Մանուկներ.

Սիրուն թռչնակ, բռնուեցար,
Ցանցից չես ազատուիլ.
Ոչինչ բանով աշխարհում
Քեզնից չենք բաժանուիլ։

Թռչնակ.

Ա՜խ, ձեր ինչի՞ն եմ պէտք ես,
Սիրելի մանուկներ
Թողէ՛ք ինձ ազատ թռչեմ,
Բացէ՛ք ցանցիս դռներ:

Մանուկներ.

Չէ, չէ, թռչնակ, չենք թողնիլ,
Դու մեզ մօտ կըմընաս.
Քեզ շաքարէ հաց կըտանք,
Կուտես, կուրախանաս:

Թռչնակ.

Ա՜խ, շաքրէ հաց չեմ սիրում,
Քաղցրեղէն չեմ ուտում.
Թողէ՛ք, դաշտի մորեխներն
Շաքրից լաւ եմ հաշւում:

Մանուկներ.

Այնտեղ դաշտում ձըմեռը
Կուզէ ցըրտից մեռնիս.
Իսկ մեզ մօտ ոսկուց շինած
Վանդակում լաւ կապրիս:

Թռչնակ.

Ո՜, մի վախէք, ձըմեռը
Տաք կողմեր կըթըռչեմ.
Իսկ բռնըւած՝ դըրախտն էլ
Ինձ բանտ կըհամարեմ:

Մանուկներ.

Թռչնակ, թռչնա՛կ, մենք ի՜նչպէս
Քեզ կըփայփայէինք.
Չէինք թողնիլ տըխրես,
Միշտ կուրախացնէինք:

Թռչնակ.

Հաւատում եմ, բայց ձեր սէրն
Ինձ միշտ կըվնասէր,
Որովհետեւ այդ կերպով
Աչքս յաւիտեան կփակուէր:

Մանուկներ.

Ճշմարիտ է, ով թռչուն,
Գերութեան չես տանիլ.
Աստուած քեզ հետ, գնա՛ թըռիր,
Ազատ ուրախ եղիր:

## 21. ՎԻԺԱԿԻ ԵՐԳԵՐ:

Քարիս տակը քարոտ է,
Ջա՛ն, գիւլիւմ, ջան ջան.
Պարնի ձիանց արօտ է.
Ջա՛ն, ծաղիկ, ջան ջան:
Ուղիղ եօթը տարի է՝
Քույրը եղբօր կարօտ է:

Դու նստելես դօշակին,
Ուշքդ ու միտքդ փէշակին.
Խըմել ես նրան գինին,
Հոտ ունիս մանիշակին:

Արեւը կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Յիսուն օր պաս եմ պահել
Իմ եղբօր ճամբի համար:

Սարի խոտը ծիլուէ ծիղ,
Եղբայր, երթանք միատեղ.
Որ հարամին վըրայ տայ՝
Գըլուխս տամ գլխիդ տեղ:

Սարէն կը գայ ձիաւոր.
Մեր տունը չարտախաւոր.
Հըրէս եկաւ իմ եղբայր,
Երեք օրուան թագաւոր:

Իմ եղբայրը սարումն է,
Շուրն գոտկածալումն է.
Եղբայր ջան, շուրդ ածա,
Քույրդ Լօռուայ քարումն է:

Եղբայրս ծառի տակին,
Սազմոսը կըռան տակին.
Սաղմոսն անգիր է արել,
Լեզուն բիւլբիւլ է դառել:



## 22. ՄԱՅԻՍ:

Մենք արժանացանք ուրախ մայիսին,
Ծառեր ծաղիկներ ողջ կանաչեցին.
Կապոյտ երկընքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու զուարթ յառաջ վազեցին:
Տերեւշատ ծառի ըստուերների տակ
Թռչուններն իրանց երգերն են երգում,
Կանաչ դաշտերի փափուկ մարգերում
Պէսպէս կենդանիք ուրախ արածում:

## 23. ՁԱԳՈՒԿ ԵՒ ԿԱՏՈՒ:

Մեր ձագուկը փոսում նըստած քընում է.
Այ խեղճ ձագուկ հիւանդ ես դու, որ չես ուզում կուտ ուտել:
Ձագն ուտում է, ձագն ուտում է, ձագն ուտում:
Ձագուկ մեր չար կատուից ըզգուշացիր
Նա ունի սուր սուր ճանկեր, կարող է քեզ վընասել:
Ձագուկը թռաւ, ձագուկը թռաւ, ձագը թռաւ:

## 24. ՆՈՐ ՏԱՐԻ:

Ահա եկաւ Նոր տարի,
Հետը բերեց նոր բարի.
Մանըր տղայոց ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանըր տըղայքն են ուրախ,
Ունին կաղին, գողինախ,
Սալորի չիր, չամիչ, թուզ,
Փըշատ, հունապ և ընկոյզ:

Մանըր տըղայք, չըմոռնաք,
Աշխարհումըս չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տըղայք կան,
Աղքատ և անօգնական:

Նոքա հայր ու մայր չունեն,
Սև չոր հացի կարօտ են.
«Աղքատներին ողորմած
Եղէք», կասէ ձեզ Աստուած:

## 25. ԼՈՒՍԻՆ ԵՒ ԱՐԵՒ:

Լուսին տեսայ խիստ պայծառ,
Նա փայլում էր ինձ համար.
Եւ տեսնում եմ աստղեր վառ
Երկընքումը անհամար:
Բայց լուսինը անցկացաւ,
Սիրուն արև դուրս եկաւ.
Արև, արև, դու ինձ տուր
Շընորհք բարի ու միտք սուր:

## 26. ԿԱՐԴԱԼ ԵՒ ԳՐԵԼ:

Երբոր լեզուս բացուեցաւ.
Ազատ խօսիլ սովորեցայ՝
Բարի մօրըս ձեռքի տակ
Կարդալ գըրել ըսկըսայ:

Անցաւ երկար ժամանակ՝
Կարողացայ ճանաչել
Մի քանի տըպած տառեր,
Նորանցով կարդալ գրել:

Շատ ժամանակ չանցկացաւ՝
Ինձ համար գիրք կարդալը
Այնպէս դժուար չէր թւում,
Ինչպէս կասեն ծոյլերը:
Այնուհետև ինձ համար
Հօլ, վեգի, գնտակի չափ
Սիրելի էր ինձ համար
Թուղթ, գրիչ, մատիտ, տետրակ:

## 27. ԱՅԾԵՄՆԻԿ ԵՒ ՈՐՍԿԱՆ։

Ո՞նհոգ ես, չես գիտում ինչ կայ քո մասին,
Պըտըտվումեն խեղճուկ, լէ լէ լէ լէ անձիդ վնասին,
Գամփռներով բարակներով միասին։
    Փախի՛ր, այծեամն, փախի՛ր, լէ լէ լէ լէ որսկան է գալիս,
    Ձագուկներդ ոլխուր լէ լէ լէ լէ լալիս են լալիս։
Որսկանը ճրագով քեզի ման կուգայ.
Գուցէ ձեռները քո արիւնով լուայ.
Խղճալի քո տեղեակ սար ու ձոր կուգայ։
    Փախիր, այծեամն, փախիր են։
Ձորերը մի՛ մտնիր, վտանգաւոր է,
Որսկանը ման կուգայ այնտեղ, սովոր է.
Քարայրից խփելով քեզ կըգլորէ։
    Փախիր, այծեամն, փախիր են։
Որսկանը գութ չունի, կանէ կրակը,
Կամ քեզի կըխորովէ կամ քո զաւակը.
Ի զուր չի անցնիլ հրացանի գընտակը։
    Փախիր այծեամն, փախիր են։
Դաշտումը չես ման գալ, թէ մտածես լաւ,
Քեզ կըվիրաւորեն, կըստանաս մեծ ցաւ,
Դուրս մի ելներ խիտ անտառից դու բնաւ։
    Փախիր, այծեամն, փախիր են։

ԳԻՆՆ Է ԵՐԿՈՒ ՌՈՒԲԼԻ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0667943

1348
Епурее

784
Я-72